ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/200

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարան
Մասնակից՝ «Պրոֆպանել» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Պրոֆպանել» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցում, արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ռաումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13233-2020 գրությամբ «Պրոֆպանել» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 28.08.2020թ. թիվ 447 գրության հիման վրա, 02.09.2020թ.-ին «Պրոֆպանել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 02.09.2020թ.-ին: 08.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/222 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/222 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/200 համարի ծածկագիրը:

23.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանը 28.08.2020թ. թիվ 447 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Յանկանում եմ Ձեզ տեղեկացնել, որ ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար «ԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով 14.03.2020թ.-ին ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի համար արևային էլեկտրական կայանների կառուցման

աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցած «Պրոֆպանել» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Մասնակից) ներկայացրած հայտի փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացվեած չէր հայտի ապահովումը՝ մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 5%-ի չափով և հայտում լրացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը չէր համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքին:

«Պրոֆպանել» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Մասնակից) տրամադրվել էր 1 աշխատանքային որ ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ մասը և 41-րդ կետը: Սակայն «Պրոֆպանել» ՍՊ ընկերությունը հատկացված ժամանակահատվածում չի ներկայացրել հայտի ապահովումը իր ներկայացրած գնուսյին առաջուրկի 5%-ի չափով, իսկ շտկված ծավալաթերթը ուղարկվել է ոչ ստորագրված ու կնքված տարբերակով և աշխատանքների բաժինների համար ստուսցվող կշիռների մի մասը շտկումից հետո ևս չէր համապատասխանում սահմանված նվուսզազույն և առավելագույն կշիռների միջակայքին:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Պրոֆպանել» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Պրոֆպանել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Պրոֆպանել» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13233-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, ներկայացնելով գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

«1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Պատվիրատուն 14/08/2020թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) հրապարակել է թիվ «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթը բաղկացած է եղել մեկ չափաբաժնից: Մրցույթի շրջանակներում նախատեսվում էր գնել «ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքներ» (այսուհետև նաև՝ Գնման առարկա):

1.2. Մասնակցիը Մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ (այսուհետև նաև՝ Հայտ):

1.3. Տեղեկագրում հրապարակված Մրցույթի հրավերի փաստաթղթերում ներառված է երկու տարբեր աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ մեկը Գնման առարկա հանդիսացող Վերին Պտղնիի Համայնքապետարանի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքներինը, իսկ մյուսը՝ Վերին Պտղնիի Մանկապարտեզի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքներինը:

1.4. Տեղեկագրում հրապարակված Մրցույթի փաստաթղթերին կից՝ Վերին Պտղնիի Համայնքապետարանի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվի համաձայն, այդ աշխատանքների նախահաշվային գինը (առանց հեղինակային և տեխնիկական հսկողության համար նախատեսված գումարի) կազմում է 7208840 (յոթ միլիոն երկու հարյուր ութ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Իսկ Վերին Պտղնիի Մանկապարտեզի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքների նախահաշվային գինը (առանց հեղինակային և տեխնիկական հսկողության համար նախատեսված գումարի) ծավալաթերթ-նախահաշվի համաձայն կազմում է 4488290 (չորս միլիոն չորս հարյուր ութսունութ հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ:

1.5. Մրցույթի հրավերին կցված ծավալաթերթում աշխատանքների նախահաշվային բաժինների համար առավելագույն կշիռներ չեն սահմանվել:

1.6. 25.08.2020թ.-ին Մասնակցը իր info@solaron.am էլեկտրոնային փոստին ստացել է Հայտը շտկելու վերաբերյալ ծանուցում (այսուհետև նաև՝ Ծանուցում), որը ուղարկվել էր flora@osllc.am էլեկտրոնային փոստի հասցեից: Ծանուցումը շարադրված էր word ֆայլում,

այն ստորագրված չէր և Ծանուցմանը կցված չէր Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ արձանագրությունը: Բացի այդ Ծանուցման մեջ մանրամասն նկարագրված չէր, թե Հայտով ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվում լրացված գների (բաժինների) կշիռները, ո՞ր մասով են հակասում Մրցույթի հրավերի պահանջներին:

1.7. 25.08.2020թ.-ի դրությամբ Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստերի վերաբերյալ արձանագրությունները չեն եղել հրապարակված Տեղեկագրում:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Պատվիրատուն Գրավոր հիմքերով հայտնել է, որ Մասնակցի ներկայացրած Հայտում առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված չէր հայտի ապահովումը և հայտում անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրված ժամանակահատվածում Մասնակիցը այդ անհամապատասխանությունը չի շտկել: Ուսումնասիրելով Պատվիրատուի նշյալ դիրքորոշումը կարծում ենք, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

2.1.1. ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ «32. Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ 9) եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում (….)»:

Վերը նշված նորմի բովանդակությունից հետևում է, եթե տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում 10մլն. ՀՀ դրամը, ապա պատվիրատուն հրավերով պետք է սահմանի, որ այդ մրցույթի շրջանակներում հայտի ապահովում ներկայացնելու պարտականություն մասնակիցը չի կրում: Այսինքն՝ հրավերում հայտի ապահովում ներկայացնելու պահանջ պետք է չսահմանվի:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, չնայած նրան, որ Տեղեկագրում հրապարակված Մրցույթի փաստաթղթերում ներառված էր երկու տարբեր աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր, Մրցույթի շրջանակներում գնման առարկա է հանդիսացել այդ աշխատանքներից ընդամենը մեկը՝ Վերին Պտղնիի Համայնքապետարանի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքները, և այդ աշխատանքների նախահաշվային գինը ըստ

նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում է 7208840 (յոթ միլիոն երկու հարյուր ութ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ Պատվիրատուն Մրցույթի հրավերում հայտի ապահովում ներկայացնելու պահանջ սահմանելու իրավասություն չուներ, քանի որ Գնման առարկայի նախահաշվային գինը չէր գերազանցում 10մլն. ՀՀ դրամը: Նշյալից կարող ենք եզրահանգել, որ Պատվիրատուն Մրցույթի հրավերում չի ներառել Կրագով սահմանված հիմնական և պարտադիր պայմանը, այն է՝ հայտի ապահովում չներկայացնելու պայմանը:

2.1.2. Եթե անգամ ենթադրենք, որ Տեղեկագրում հրապարակված Մրցույթի փաստաթղթերում ներառված երկու աշխատանքներն էլ (Վերին Պտղնիի Համայնքապետարանի համար արևային էլեկտրական կայանների կառուցման և Վերին Պտղնիի Մանկապարտեզի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքները) ընդգրկված էին Գնման առարկայում, ապա այդ դեպքում կարող ենք արձանագրել, որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 25-րդ հոդվածի 2-րդ մասը, քանի որ այդ աշխատանքները ունեն առանձին-առանձին՝ մեկը մյուսի հետ կապ չունեցող նախագծանախահաշվային փաստաթղթեր, այսինքն՝ ըստ էության առանձին (տարբեր) բնութագրեր: Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, (….):»:

Բացի այդ, նման խմբավորումը անհիմն բարդացնում է Մասնակցի մասնակցությունը Մրցույթին, քանի որ ինչպես երևում է սույն գործի փաստերից երկու աշխատանքների (Վերին Պտղնիի Համայնքապետարանի համար արևային էլեկտրական կայանների կառուցման և Վերին Պտղնիի Մանկապարտեզի համար արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքների) նախահաշվային գները առանձին-առանձին չեն գերազանցում 10մլն. ՀՀ դրամը: Այսինքն՝ եթե այդ աշխատանքները Մրցույթի հրավերում ներառված լինեին որպես առանձին չափաբաժիններ, ապա այդ դեպքում ևս Մասնակիցը հայտի ապահովում ներկայացնելու պարտականություն չէր ունենա, համենայն դեպս Պատվիրատուն հրավերում նման պահանջ սահմանելու իրավունք չուներ: Այս դեպքում նույնպես կարող ենք արձանագրել, որ պատվիրատուն խախտել է Օրենքի պահանջները, մասնավորապես՝ Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դրույթները, որի համաձայն «4. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝ 2) խտրական են և

սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում (….) են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.»

2.2. Պատվիրատուն Գրավոր հիմքերով հայտնել է, որ Մասնակցի ներկայացրած Հայտում առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես՝ լրացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը չէր համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքին, ու հայտում անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրված ժամանակահատվածում Մասնակիցը այդ անհամապատասխանությունը չի շտկել: ՈՒսումնասիրելով Պատվիրատուի նշյալ դիրքորոշումը կարծում ենք, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

Տեղեկագրում հրապարակված Մրցույթի հրավերին կցված ծավալաթերթում աշխատանքների նախահաշվային բաժինների համար առավելագույն կշիռներ սահմանված չեն եղել:

Հարկ է նշել, որ Մրցույթի հրավերին եղել է կցված նաև ամփոփ նախահաշիվ, որտեղ անորոշ ձևով նշված էին ինչ որ տոկոսներ, սակայն այդ նախահաշվում ներառված էր նաև հեղինակայն և տեխնիկական հսկողության ծառայությունների համար նախատեսված գումարները, որոնց դիմաց նույնպես տոկոսներ են եղել նշված, իսկ ինչպես հայտնի է հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունները Կապալառուի կողմից կատարվող շինարարական աշխատանքների ծավալի մեջ չեն ներառվում, և այդ ծառայությունները ձեռք են բերվում շինարարական աշխատանքներից առանձին: Բացի այդ ամփոփ նախահաշվում նշված ընդհանուր գումարը տարբերվում էր ծավալաթերթում նշված գումարից: Նման պայմաններում անորոշ է, թե որ կշիռները Մասնակիցը պետք է հիմք ընդուներ ծավալաթերթը կազմելիս:

Թերևս այդ անորոշությունը հնարավոր էր որոշակիացնել Պատվիրատուի հայտերի բացման (գնահատման) նիստի վերաբերյալ արձանագրությամբ և «հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու» վերաբերյալ ծանուցմամբ, քանի որ Կարգի 41-րդ կետի և 42-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ծանուցման և գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ Պատվիրատուն պետք է մանրամասն նկարագրի Մասնակցի հայտում հրավերի նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը:

Սակայն, Ծանուցման մեջ միայն նշված էր, որ Հայտում լրացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը չի

համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքին, առանց մանրամասնելու անհամապատասխանությունը: Ծանուցմանը կցված չէր գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ արձանագրությունը:

2.3. Վերը նշվածի հետ մեկ տեղ Ձեր ուշադրությունը ցանկանում ենք հրավիրել այն հանգամանքին, որ Ծանուցումը շարադրված էր word ֆայլում, այն ստորագրված չէր և Ծնուցմանը կցված չէր Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ արձանագրությունը և Մասնակցին Ծանուցումը ուղարկելու օրը՝ Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված չէին Տեղեկագրում:

2.3.1. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի համաձայն. «1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: (...):

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: (...):

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: (...):»

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն. «26. (...): Գնահատող հանձնաժողովի՝ 2) գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: (...). 5) նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: (...).»

Կարգի 43-րդ կետի համաձայն «43. Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (...), հրապարակում է տեղեկագրում:»

Վերոգրյալից հետևում է, որ հայտերի բացման նիստի օրը և ժամին հայտերի բացման նպատակով հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ: Հայտերի բացման նիստից հետո կազմվում է հայտերի բացման նիստի արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները և հանձնաժողովի նիստի քարտուղարը: Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված տարբերակը հրապարակվում է Տեղեկագրում:

Գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը Տեղեկագրում հրապարակելու պահանջը վերը գրված իրավական նորմերով սահմանելը ինքնանպատակ չէ, այն ուղղված է մասնակիցներին և այլ անձանց հայտերի բացման և հայտերի գնահատման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելուն ու այդ տեղեկատվության հրապարակայնությունը ապահովելուն, իսկ ստորագրված արձանագրության բնօրինակի արտատպումը Տեղեկագրում հրապարակելու պահանջը միտված է վկայելու այն փաստը, որ հանձնաժողովի քարտուղարը և արձանագրությամբ նշված հանձնաժողովի անդամները իրականում մասնակցել են գնահատող հանձնաժողովի տվյալ նիստին, այդ կերպ նաև փաստելով այդ նիստի իրավազորությունը և այն, որ արձանագրությամբ արձանագրված որոշումները իրականում ընդունել են դրանում նշված հանձնաժողովի անդամները:

Հետևաբար, հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի անդամների մասնակցությունը հանձնաժողովի նիստին, հանձնաժողովի նիստի իրավազորությունը և այդ նիստի ժամանակ ընդունված որոշումների օրինականությունը կարող է առնվել կասկածի տակ, եթե գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ արձանագրությունը հրապարակված չէ տեղեկագրում:

Այսպիսով, ինչպես երևում է սույն բողոքի փաստերից՝ Մասնակցին Ծանուցումը ուղարկելու օրը գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ Արձանագրությունները, ոչ Տեղեկագրում է հրապարակվել, ոչ էլ ուղարկվել է Մասնակցին: Սակայն, ինչպես պարզեցինք վերոգրյալով Արձանագրությունը հանձնաժողովի կողմից Տեղեկագրում հրապարակելը պարտադիր է: Ուստի Ծանուցումը ուղարկելու օրվա դրությամբ անհասկանալի էր, թե Ծանուցմամաբ նշված «անհամապատասխանությունները» ում կողմից է արձանագրվել, քանի որ Ծանուցումը ստորագրված չէր իսկ գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ արձանագրությունը, ոչ կցված էր Ծանուցմանը, ոչ էլ հրապարակված էր Տեղեկագրում:

2.4. Փաստորեն, ինչպես պարզեցինք սույն դիրքորոշման 2.1, 2.1.1, 2.1.2 կետերով, եթե Պատվիրատուն գործեր իրավաչափ, ապա հրավերում հայտի ապահովում ներկայացնելու պահանջ պետք է չսահմանվեր: Իսկ ինչ վերաբերվում է Հայտով ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների անհամապատասխանությանը հրավերով սահմանված նվազագույն և առավելագույն կշիռներին, ապա ևս մեկ անգամ հարկ է նշել, որ հրավերին կից ծավալաթերթում կշիռներ նշված չեն եղել, այդ հանգամանքից ելնելով կարող ենք փաստել, որ Հայտով ներկայացված ծավալաթերթում հրավերով սահմանված ծավալաթերթի նկատմամբ կշիռների անհամապատասխանություն չի կարող լինել:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են, քանի որ Պատվիրատուն Մրցույթի անցկացման ընթացքում թույլ է տվել բազմաթիվ խախտումներ և այդ խախտումների արդյունքում է, որ Մասնակիցը հայտնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի տակ: Նշված խախտումների համար պատասխանատվությունը պետք է կրի Պատվիրատուն, այլ ոչ թե Մասնակիցը, քանի որ Կարգի 2-րդ կետի համաձայն «2. Հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև Գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:»:

2.5. Ամփոփելով վերոգրյալը կարող ենք արձանագրել, որ Պատվիրատուն՝

խախտել է.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և 25-րդ հոդվածի 2-րդ, 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 8-րդ, 34-րդ հոդվածի 9-րդ մասերը,

Կարգի 26-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերը, 41-րդ կետը, 42-րդ կետի 1-ին ենթակետը և 43-րդ կետը,

չի կիրառել.

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթկետը:

Նշյալը վկայում է այն մասին, որ Մրցույթը անցեկացվել օրենքով սահմանված կանոնների խախտմամբ, հետևաբար այն շահագրգիռ անձի պահանջով կարող է ճանաչվել անվավեր: ՈՒստի դա վկայում է այն մասին, որ այդ մրցույթի շրջանակներում ընդունված որոշումները նույնպես անվավեր են:»:

Մասնակիցը, հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 50-րդ հոդվածով, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Պրոֆպանել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2020/200 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2020/200 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.08.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Պրոֆպանել» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.08.2020թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրության 3.1 և 3.2 կետերի համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժնի համար ստացվող կշիռների մասի մասը չի համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքին և ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը՝ գնային առաջարկի 5%-ի չափով:

v. Նույն արձանագրության 5.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի և նույն կարգի 41-րդ կետի դրույթները, որոշել է գնման ընթացակարգի նիստը կասեցնել և մասնակցին տրամադրել 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար

vi. Պատվիրատուն 24.08.2020թ.-ին ծանուցել է Մասնակցին՝ տրամադրելով մեկ աշխատանքային օր ժամկետ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

vii. Հանձնաժողովի 26.08.2020թ.-ի նիստի թիվ 2.2 արձանագրության 6.3 կետի համաձայն՝ Մասնակիցը չի ներկայացրել հայտի ապահովումը իր ներկայացրած գնային աասջարկի 5%-ի չափով, իսկ շտկված ծավալաթերթը ուղարկվել է ոչ ստորագրված ու կնքված տարբերակով և աշխատանքների բաժինների համար ստացվող կշիռների մի մասը շտկումից հետո ևս չի համապատասխանում սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքին:

Հանձնաժողովը որոշել է «Պրոֆպանել» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13233-2020 գրությամբ «Պրոֆպանել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային

համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

Ընթացակարգի Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.8-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված

անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում, ծավալաթերթ-նախահաշիվ և այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի կողմից արևային էլեկտրական կայանների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Պրոֆպանել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ և Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 24.08.2020թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում թերի է շտկել արձանագրված անհամապատասխանությունները և Հանձնաժողովը որոշել է գնահատել անբավարար և մերժել Մասնակցի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Պրոֆպանել» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ դատական դեպարտամենտի կողմից «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով հայտարարված գնանշման հարցմանը և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ներկայացված մնացած հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ իրավական նորմերի հիման վրա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն դեպքում Մասնակիցը Հանձնաժողովի և (կամ) Պատվիրատուի կողմից թույլ տված Օրենքի 25-րդ հոդվածի ենթադրյալ խախտման հանգամանքների վերաբերյալ կարող էր մինչև հայտերի բացումը՝ 21.08.2020թ.-ը, ներկայացնել բողոք:

Որպիսի պայմաններում Մասնակցի կողմից ենթակա էր ներկայացման նաև հայտի ապահովում՝ վերջինիս գնային առաջարկի հինգ տոկոսի չափով, որպես հրավերով սահմանված պահանջ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: ...:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: ...:

Հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման

Վերոնշյալ նորմերի լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտի ապահովում ներկայացնում է հրավերով սահմանված պահանջի դեպքում, այն է՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Դիրքորոշմամբ բարձրացված մյուս՝ ծանուցման ձևին և բովանդակությանն ուղղված առարկությունների վերաբերյալ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.7 կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձն ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և

մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը:

Սույն դեպքում, Մասնակցին ուղարկված շտկման մասին ծանուցմամբ, Հանձնաժողովի քարտուղարը հստակ և մանրամասն նշել է, որ ներկայացված հայտին կից բացակայում է հայտի ապահովումը, որն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փող, թիվ 48 հասցեով կամ ուղարկել flora@osllc.am էլ. հասցեին:

Վերոգրյալների հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով Հանձնաժողովի քարտուղարի կողմից 24.08.2020թ.-ին Մասնակցի info@solaron.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումը, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Մասնակիցն իրազեկվել է և հնարավորություն է ունեցել իրապես պարզելու ծանուցմամբ պարունակվող՝ հայտի ապահովումը ներկայացնելու հանգամանքը, որը, սակայն, սահմանված շտկման ժամանակահատվածում չի ներկայացվել:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պրոֆպանել» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, թերի շտկելով արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես չներկայացնելով հայտի ապահովումը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13233-2020 գրությամբ «Պրոֆպանել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/200 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պրոֆպանել» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**